Հայաստանի արդյունքները Համաշխարհային բանկի Business Ready 2025 զեկույցում

Համաշխարհային բանկի Business Ready (B-READY) վարկանիշային զեկույցը գնահատում է այն կարգավորումները, որոնք ուղղակիորեն ազդում են գործարար միջավայրի վրա՝ հնարավորություն տալով իրականացնել միջերկրային համեմատություններ ներկայումս 101 երկրների միջև (հաջորդ տարիներին երկրների ցանկն ընդլայնվելու է) հետևյալ 10 ոլորտներում՝

1. **Բիզնեսի սկիզբ**
2. **Բիզնեսի գտնվելու վայր**
3. **Կոմունալ ծառայություններ**
4. **Աշխատուժ**
5. **Ֆինանսական ծառայություններ**
6. **Միջազգային առևտուր**
7. **Հարկում**
8. **Վեճերի լուծում**
9. **Շուկայի մրցակցություն**
10. **Բիզնեսի անվճարունակություն**



B-READY զեկույցը, որը փոխարինում է նախկին Doing Business զեկույցին, գնահատում է երկրների գործարար միջավայրը ոչ միայն օրենսդրական դաշտի, այլև դրա գործնական կիրառելիության տեսանկյունից՝ հիմնվելով 3 սյուների վրա՝ կարգավորումների շրջանակ, հանրային ծառայություններ և գործառնական արդյունավետություն՝ առավելագույնը 100 միավոր սանդղակում:

Հայաստանը B-READY 2025-ում

Համաշխարհային բանկի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 29-ին հրապարակված B-READY 2025 վարկանիշային զեկույցի համաձայն՝ Հայաստանը գրանցել է միջինից բարձր արդյունքներ՝ ընդգրկվելով Եվրոպա և Կենտրոնական Ասիա տարածաշրջանի առավել կայուն գործարար միջավայր ունեցող երկրների խմբում:



Աղյուսակ 1. Հայաստանի դիրքը առանձին ոլորտներով

Զեկույցի համաձայն՝ Հայաստանն, ընդհանուր առմամբ, ստացել է **66.7 միավոր**, **ինչը 6.6 միավորով** գերազանցում է գնահատված 101 երկրների միջինացված ցուցանիշը (60.1 միավոր): Այս արդյունքը հաստատում է Հայաստանի դիրքը որպես դինամիկ զարգացող տնտեսություն՝ միջինից բարձր բիզնես միջավայրով:

Հայաստանը լավագույն արդյունք է գրանցել «Բիզնեսի սկիզբ» ոլորտում՝ ստանալով **96 միավոր,** ինչը երկրին ապահովել է **առաջատար դիրք 101 երկրների շարքում:**

Բարձր արդյունքներ են արձանագրվել նաև հետևյալ ոլորտներում՝

- **Ֆինանսական ծառայություններ** – 85.04 միավոր
- **Կոմունալ ծառայություններ** – 72.52 միավոր
- **Բիզնեսի գտնվելու վայր** – 68.49 միավոր
- **Հարկում** – 67.50 միավոր
- **Աշխատուժ** – 67.0 միավոր

Այս ոլորտներում Հայաստանը գերազանցել է համաշխարհային միջին ցուցանիշները՝ դիրքավորվելով բարձր գնահատվող երկրների շարքում:

Չնայած դրական գնահատականների ընդհանուր գերակշռությանը՝ Զեկույցը մատնանշում է Շուկայի մրցակցություն (58.21 միավոր), Վեճերի լուծում (57.96 միավոր), Միջազգային առևտուր (55.26 միավոր) և Բիզնեսի անվճարունակություն (39.17 միավոր) ոլորտներում հետագա բարելավման ներուժը:

Տարածաշրջանային համեմատություն



Աղյուսակ 2. Հայաստանի դիրքը տարածաշրջանում՝ ըստ գրանցած ընդհանուր արդյունքի